ԱԺ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովների

ու

ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների

համատեղ նիստ հրավիրելու վերաբերյալ

ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Աժ Կանոնակարգ» ՀՀ օրենքի 115-րդ հոդվածի 2-րդ մասը.

1) սույն թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը 11:00 ԱԺ 1-ին մասնաշենքի 334 դահլիճում ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ հրավիրել՝ ՀՀ Հաշվեքննիչ պալատի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները քննարկելու նպատակով

2) սույն թվականի դեկտեմբերի 24-ին, ժամը 11:00 ԱԺ 1-ին մասնաշենքի 334 դահլիճում ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի և ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ հրավիրել՝ ՀՀ Հաշվեքննիչ պալատի էկոնոմիկայի նախարարությունում ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները քննարկելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ **Գևորգ Պապոյան**